# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրի մասին

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը որը գտնվում է ք.Երևան Մ.Մկրտչյան 5 ա հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար **ֆինանսական հաշվետվությունների կազմման ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՆԱԿ-ՄԱԾՁԲ-01/23** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունվարի 17-ին կնքված N ՆԱԿ-ՄԱԾՁԲ-01/23 ծածկագրով պայմանագրի մասին տեղեկատվությունը՝

| | Գնման առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | անվանումը | չափման միավորը | քանակը | | նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ | | համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) | պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) |
| | | | առկա ֆինանսական միջոցներով | ընդհանուր | առկա ֆինանսական միջոցներով | ընդհանուր | | |
| 1 | **ֆինանսական հաշվետվությունների կազմման ծառայություններ** | դրամ | 1 | 1 | 900.000 | 900.000 | **ֆինանսական հաշվետվությունների կազմման ծառայություններ** | **ֆինանսական հաշվետվությունների կազմման ծառայություններ** |

| | |
|---|---|
| Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը | Գնումների մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդված |

| Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագիր | Բյուջե | Արտաբյուջե | Այլ |
| | | | | + | | |
| ... | | | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը | | 11.01. 2023թ. | |
| Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը | 1 | փոփոխություն չի կատարվել | |
| | ... | | |
| Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը | | Հարցարդման ստացման | Պարզաբանման |
| | 1 | Չի ստացվել | |

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գինը ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր |
| | | առկա ֆինանսական միջոցներով ընդհանուր | առկա ֆինանսական միջոցներով ընդհանուր | առկա ֆինանսական միջոցներով ընդհանուր |
| 1 | **«Փոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ** | **900 000** | - | **900 000** |

| | |
|---|---|
| Այլ տեղեկություններ | Ծանոթություն՝ |

| Տվյալներ մերժված հայտերի մասին | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար) | | | | | | | | |
| | | Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը | Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը | Առաջարկած գնման առարկայի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը | Մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը | Մասնագիտական փորձառությունը | Ֆինանսական միջոցներ | Տեխնիկական միջոցներ | Աշխատանքային ռեսուրսներ | Գնային առաջարկ |
| 1 | | | | | | | | | | |

| | |
|---|---|
| Այլ տեղեկություններ | Ծանոթություն՝ Հայտերի մերժման այլ հիմքեր: |
| | մերժված հայտեր չեն եղել |

| | | |
|---|---|---|
| Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը | 13.01.2023թ | |
| Անգործության ժամկետ | Անգործության ժամկետի սկիզբ | Անգործության ժամկետի ավարտ |
| | չի կիրառվել | |
| Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը | 16.01.2023թ | |
| Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը | 16.01.2023թ | |
| Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը | 17.01.2023թ | |

| Չափա- | Ընտրված | Պայմանագրի |
|---|---|---|

| Չափաբաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Պայմանագրի համարը | Կնքման ամսաթիվը | Կատարման վերջնաժամկետը | Կանխավճարի չափը | Գինը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՀՀ դրամ | |
| | | | | | | Առկա ֆինանսական միջոցներով | Ընդհանուր |
| 1 | «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ | ՆԱԿ-ՄԱԾՁԲ-01/23 | 17.01.2023թ | 31.03.2023թ | - | 900 000 | 900 000 |

Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն

| Չափաբաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Հասցե, հեռ. | Էլ.-փոստ | Բանկային հաշիվը | ՀՎՀՀ / Անձնագրի համարը և սերիան |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ | Ք. Երևան, Նալբանդյան 50, բն 136 | info@4aconsulting.am | Հ/Հ 2500010351620100 | ՀՎՀՀ 00148693 |

| | |
|---|---|
| Այլ տեղեկություններ | - |
| Մասնակիցների ներգրավման նպատակով <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները | Հրապարակումները իրականացվել են <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն |
| Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը | Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել |
| Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները | Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել |
| Այլ անհրաժեշտ տեղեկություններ | - |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող

| Անուն, Ազգանուն | Հեռախոս | Էլ. փոստի հասցեն |
|---|---|---|
| Գայանե Դանիելյան | +37493778313 | gayane.danielyan@isc.am |

Պատվիրատու՝ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ

# ОБЪЯВЛЕНИЕ

## о заключенном договоре

Фонд «Центр поддержки инвестиций», расположенный по адресу г. Ереван, ул. М. Мкртчяна, 5а, представляет ниже договор, подписанный 17 января 2023 года в результате процедуры закупки под кодом ՆԱԿ-ՄԱԾՁԲ-01/23 , организованной для с целью приобретения услуг финансовой отчетности для своих нужд Информация о договоре с кодом ՆԱԿ-ՄԱԾՁԲ-01/23 :

| | Предмет закупки | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| номер лота | наименование | единица измерения | количество | | сметная цена /драмов РА/ | | краткое описание (техническая характеристика) | краткое описание (техническая характеристика), предусмотренное по договору |
| | | | по имеющимся финансовым средствам | общее | по имеющимся финансовым средствам | общая | | |
| | услуги финансовой отчетности | Деньги | 1 | 1 | 900 000 | 900 000 | □□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□ | □□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□ |

| Обоснование выбора процедуры закупки | |
|---|---|
| | |

| Источник финансирования закупки по функциональной классификации бюджетных расходов | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Раздел | Группа | Класс | Программа | Бюджет | Внебюджет | Прочее |
| ... | | | | | | |

| | | |
|---|---|---|
| Дата направления или опубликования приглашения | | 11.01.2022г. |
| Дата изменений, внесенных в приглашение | 1 | |
| | ... | |
| Дата разъяснений относительно приглашения | | Получения запроса / Разъяснения |
| | 1 | - / - |
| | ... | |

| П/Н | Наименования участников | Цена, представленная по заявке каждого участника Драмов РА | | |
|---|---|---|---|---|
| | | Цена без НДС | НДС | Всего |
| | | по имеющимся финансовым средствам общая | по имеющимся финансовым средствам общая | по имеющимся финансовым средствам общая |
| Лот 1 | | | | |
| 1 | ЗАО "Фор Эй Консалтинг" | 900 000 | 0 | 900 000 |
| Иные сведения | Примечание: Если назначены переговоры с целью снижения цен. | | | |

| Данные об отклоненных заявках | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Номер лота | Наименование участника | Результаты оценки (удовлетворительно или неудовлетворительно) | | | | | | | | |
| | | Соответствие составления и представления конверта | Наличие требуемых по приглашению документов | Соответствие технических характеристик предложенного предмета закупки | Соответствие профессиональной деятельности и предусмотренной по договору деятельности | Профессиональный опыт | Финансовые средства | Технические средства | Трудовые ресурсы | Ценовое предложение |
| 1 | | | | | | | | | | |
| ... | | | | | | | | | | |
| Иные сведения | Примечание: Иные основания для отклонения заявок. | | | | | | | | | |

| | |
|---|---|
| Дата определения отобранного участника | 13.01. 2023 г |
| Период ожидания | Начало периода ожидания / Окончание периода ожидания |
| Дата извещения отобранного участника о предложении относительно заключения договора | 16.01.2023 г |
| Дата поступления у заказчика договора, подписанного отобранным участником | 16.01.2023 г |
| Дата подписания договора заказчиком | 17.01.2023 г |

| Номер лота | Отобранный участник | Договор | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Номер договора | Дата заключения | Крайний срок исполнения | Размер предоплаты | Цена | |
| | | | | | | Драмов РА | |
| | | | | | | По имеющимся финансовым средствам | Общая |
| 1 | ЗАО "Фор Эй Консалтинг" | ՆԱԿ-ՄԱԾՁԲ-01/23 | 17.01.2023թ | 31.03.2023թ | - | 900 000 | 900 000 |
| ... | | | | | | | |

Наименование и адрес отобранного участника (отобранных участников)

| Номер лота | Отобранный участник | Адрес, тел. | Эл. почта | Банковский счет | УНН/ Номер и серия паспорта |
|---|---|---|---|---|---|
| 1 | ЗАО "Фор Эй Консалтинг" | Г"Ереван, Налбандяна 50, квартира 136 | info@4aconsulting.am | 2500010351620100 | 00148693 |

| | |
|---|---|
| Иные сведения | **Примечание:** В случае, если какой-либо из лотов не состоялся, заказчик обязан заполнить сведения об этом. |
| Сведения о публикациях, осуществленных согласно Закону Республики Армения "О закупках" с целью привлечения участников | Осуществлены публикации, предусмотренные законодательством РА о закупках: |
| В случае выявления противозаконных действий в рамках процесса закупки — их краткое описание, а также краткое описание предпринятых в связи с этим действий | В ходе покупки не было обнаружено незаконных действий |
| Жалобы, поданные относительно процесса закупки, и принятые по ним решения | Нет претензий к процессу покупки |
| Другие необходимые сведения | |

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к координатору закупок

| Имя, Фамилия | Телефон | Адрес эл. почты |
|---|---|---|
| Гаяне Даниелян | 093778313 | gayane.danielyan@isc.am |

Заказчик: Фонд «Центр поддержки инвестиций

**«ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՆԱԿ-ՄԱԾՁԲ-01/23**

ք. Երևան

27.01.2023թ.

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս տնօրեն՝ Լ.Օհանեսյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա Մարտիրոսյանի, ով գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ֆինանսական հաշվետվությունների կազմման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 900 000/ինը հարյուր հազար/ՀՀ դրամ

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝

չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 02562459
Գլխավոր տնօրեն Լ. Օհանեսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ
Ք.Երևան, Նալբանդյան 50, բն 136
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010351620100
ՀՎՀՀ 00148693
տնօրեն՝ Ա. Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 79991180 /1 | Ստորև | դրամ | 900000 | 1 | Ք.Երևան, Ս.Մկրտչյան 5ա | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 70 օրացուցային օրվա ընթացքում |

**Սևծովյան ավազանի երկրներում գյուղատնտեսության և հարակից ոլորտների թվայնացման համար պայմանների համատեղ ստեղծում, Խելացի գյուղատնտեսություն-BSB-908**
(Jointly preparing the conditions in the agricultural and connected sectors in the BSB area for the digital transformation, BSB Smart Farming Project - BSB-908) ծրագրի շրջանակներում

Ծառայություններ մատուցող կազմակերպությունը eMS համակարգի միջոցով պետք է իրականացնի վերոնշյալ ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացված բոլոր ծախսերի համալիր ստուգում և վավերացում, ինչպես նաև eMS համակարգի միջոցով հավաստագրի տրամադրում առ այն, որ բոլոր իրականացված գնումները և ծախսերը կատարվել են ծրագրի և տվյալ երկրի գնումների ընթացակարգերով և օրենսդրությամբ նախանշված կանոններով: Վավերացման ենթակա գնումները և ծախսերը ներառում են հետևյալ ժամանակահատվածը՝ 14.05.2021-11.11.2022: Նախատեսվող ծառայության մատուցման հիմնական ժամկետներն են՝ 2023 թվականի հունվարի 12-ից 2023թ.-ի մարտի 31-ը: Ծախսերի ստուգման հիմնական աշխատանքները պետք է կատարվեն մինչև 2023 թ.-ի հունվարի 31: Ծրագիրը իրականացնող կազմակերպությունից անհրաժեշտության դեպքում գնումների վերաբերյալ պարզաբանումներ կամ հավելյալ փաստաթղթերի հարցումը պետք է կատարվի մինչև 2023թ.-ի հունվարի 31-ը: eMS համակարգում գնումների վերջնական ստուգում, հաստատումը, ինչպես նաև նույն համակարգում հավաստագրի տրամադրումը պետք է իրականացվի մինչև ս.թ. փետրվարի 6-ը: Որից հետո մինչև 2023թ.-ի մարտի 31-ը հնարավոր է ծրագրի ֆինանսավորող կողմը որոշ պարզաբանումների հարցում անի ծրագրով կատարված ծախսերի վավերացումն իրականացրած կազմակերպությանը կամ ծրագիրը իրականացնող կազմակերպությանը:

- Մանրամասն ծանոթանալ Սևծովյան ավազանի ծրագրերի ծախսերի վավերացման համար նախատեսված ուղեցույցին և ամբողջ գործընթացին՝ ըստ ծրագրի կանոնների իրականացնելով գնումների և ծախսերի ստուգումները, մանրամասն հաշվետվության և հավաստագրի տրամադրումը:

... eMS հաշիվ, որը պետք է իրականացվեն գնումների և ծախսերի ստուգման և վավերացման բոլոր աշխատանքները:

- eMS համակարգի միջոցով իրականացնել ծրագրի մեկնարկից մինչ հաշվետու ժամանակահատվածի ավարտը իրականացված բոլոր ծախսերի և գնումների մանրամասն ստուգում:
- Կատարված ստուգման եզրակացությունը, ինչպես նաև կատարված աշխատանքի վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը և ծրագրի շահառու կազմակերպության հավաստագիրը (eMS համակարգով տրամադրվող) պետք է իրականացվի մինչև սույն թվականի փետրվարի 6-ը:
- Կատարված աշխատանքի, տրված եզրակացության կամ այլնի վերաբերյալ պարզաբանումների կամ վերաձևակերպումների անհրաժեշտության ծագման դեպքում ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է տրամադրել ծառայությունները մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
- Իրականացված ստուգումների հիման վրա տրամադրել մանրամասն եզրակացություն-հաշվետվություն eMS համակարգում ծրագրի ղեկավարի կողմից նախապես ներկայացված ֆինանսական հաշվետվության (ծախսերի, գնումների) վերաբերյալ, ինչպես նաև դրանց օրինականության և օրինաչափության վերաբերյալ:
- Իրականացնել ծախսերի հաստատման գործընթաց՝ ապահովելով հայտարարագրված ծախսերի իրական, ճշգրիտ ճանաչելիությունը և ստուգումը, հաստատել, որ ապրանքների առաքումը և ծառայությունների մատուցումը, ինչպես նաև ծախսերը համապատասխանում են ծրագրի և ԵՄ-ի կողմից նախասահմանված ընթացակարգերին և ազգային կանոններին:
- Անհրաժեշտ պարզաբանումների վերաբերյալ ժամանակին տեղեկացնել ծրագրի համակարգողին և ֆինանսական մենեջերին, իսկ պարզաբանումները ստանալուց հետո տալ համապատասխան եզրահանգում:
- Ծախսերի ստուգման և վավերացման վերջնական զեկույցում պետք է ներառված լինի համալիր եզրահանգում ծախսերի իրատեսության, ռիսկերի ճիշտ գնահատման, վճարումների և կատարված աշխատանքի վերաբերյալ:

Ծառայությունն մատուցող փորձագետի նախընտրելի կրթություն և փորձ

- Ֆինանսների/հաշվապահության ոլորտում բարձրագույն կրթություն:
- ACCA միջազգային հավաստագրի առկայություն:
- Նվազագույնը 5 տարվա աուդիտորական փորձ միջազգային ծրագրերի ոլորտում:
- Աուդիտորական կազմակերպությունը պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բաց հայտագրման հիման վրա ձևավորված աուդիտորական կազմակերպությունների ցանկում, որում ներառված աուդիտորական կազմակերպությունները իրավասու են իրականացնել Սևծովյան Ծրագրի շահառուների ծախսերի հավաստիության աուդիտը:

Աուդիտն իրականացնող փորձագետի գիտելիքներ, հմտություններ և կարողություններ

- Ֆինանսական աուդիտի անցկացման, վերլուծությունների, եզրակացությունների, ինչպես նաև հաշվետվությունների տրամադրման գերազանց գիտելիքներ և կարողություններ,
- Պլանավորման և ժամանակի կառավարման գերազանց հմտություններ,
- Տեղեկատվության հավաքագրման, ֆինանսական վերլուծության, հաշվետվություններ կազմելու պատշաճ գիտելիքներ և փորձ,
- Ֆինանսական տվյալների բազայի հավաքագրման և դրա հետ աշխատանքի պատշաճ հմտություններ,
- Գերազանց հաղորդակցման և միջանձնային հմտություններ,
- Գրավոր և բանավոր անգլերենի գերազանց իմացություն:

